ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ-ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԳԾՈՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների Կառավարությունները (այսուհետ՝ Կողմեր),

ճանաչելով աշխատանքային գործունեություն իրականացնելիս՝ աշխատողների սոցիալական պաշտպանության կարեւորությունը,

գիտակցելով աշխատանքային գործունեության հարցերի կարգավորման անհրաժեշտությունը եւ ձգտելով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետություններում աշխատանքի գծով միասնական նորմատիվ բազայի ստեղծմանը, հավատարիմ մնալով մարդու իրավունքների բնագավառում ՄԱԿ-ի հիմնարար փաստաթղթերին եւ Աշխատանքի միջազգային կազմակերպության շրջանակներում մշակված սկզբունքներին,

նշելով, որ ստեղծվող աշխատանքի ընդհանուր շուկան կապահովի Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների շահերի զուգակցումը կոնկրետ գործատուների եւ աշխատողների շահերի հետ,

նպատակ ունենալով բարելավել Կողմերի փոխգործակցությունը աշխատավորների զբաղվածության սոցիալական եւ մասնագիտական-իրավական երաշխիքների ապահովման, ինչպես նաեւ կենսաթոշակային ապահովության հարցերում,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Սույն Համաձայնագիրը կարգավորում է Կողմերի համագործակցության հիմնական ուղղությունները բանվորների աշխատանքների եւ մասնագիտությունների Միասնական սակագնային-որակավորման տեղեկատուի (այսուհետ՝ ՄՍՈՏ) եւ ծառայողների պաշտոնների Որակավորման տեղեկատուի (այսուհետ՝ ՈՏ) կիրառման բնագավառում՝ Կողմերի ձեռնարկություններում, հիմնարկներում եւ կազմակերպություններում (այսուհետ՝ ձեռնարկություններ), անկախ սեփականության ձեւից, աշխատողների կողմից աշխատանքային գործունեություն իրականացնելիս:

ՀՈԴՎԱԾ 2

Կողմերը համապատասխան ազգային մարմիններին կհանձնարարեն ՄՍՈՏ-ի եւ ՈՏ-ի մեջ մտնող աշխատանքների, մասնագիտությունների եւ պաշտոնների անվանումների հիման վրա համատեղ մշակել բանվորների մասնագիտությունների եւ ծառայողների պաշտոնների Միջպետական դասակարգիչ (այսուհետ՝ Միջպետական դասակարգիչ):

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերը կապահովեն Միջպետական դասակարգչի կիրառումը բանվորների մասնագիտությունների եւ ծառայողների պաշտոնների անվանումների, ձեռնարկությունների աշխատողների մասնագիտական որակավորման եւ գիտելիքների մակարդակի նկատմամբ պահանջների միատեսակություն ստեղծելու նպատակով:

ՀՈԴՎԱԾ 4

Միջպետական դասակարգչի հաստատման, Միջպետական դասակարգչի մեջ մտնող բանվորների մասնագիտությունների եւ ծառայողների պաշտոնների անվանումների ներառման եւ հանման մասին որոշումներն ընդունում է Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների աշխատանքի, միգրացիայի եւ

բնակչության սոցիալական պաշտպանության գծով Խորհրդատվական խորհուրդը (այսուհետ՝ Խորհրդատվական Խորհուրդ):

ՀՈԴՎԱԾ 5

Կողմերը պարտավորվում են ֆինանսավորել Միջպետական դասակարգիչի ստեղծման, ՄՍՈՏ-ի եւ ՈՏ-ի սակագնային-որակավորման եւ որակավորման բնութագրերի մշակման միջոցառումները:

Նշված միջոցառումների ֆինանսավորման ծավալները, կարգը եւ պայմաններն որոշվում են Կողմերի լիազորված մարմինների կողմից:

ՀՈԴՎԱԾ 6

Համագործակցության մասնակից պետություններում օրինական կարգով բնակվող եւ ձեռնարկություններում աշխատող աշխատողների մասնագիտական բարձր մակարդակի ապահովման նպատակով, Կողմերը կսահմանեն համեմատելի պահանջներ կադրերի պատրաստման եւ որակավորման շնորհման կրթական ստանդարտների նկատմամբ, որոնք
կիրառվում են սույն Համաձայնագրի մասնակից պետություններում:

ՀՈԴՎԱԾ 7

Կողմերը համապատասխան ազգային մարմիններին կհանձնարարեն անցկացնել իրենց պետություններում գոյություն ունեցող բանվորների մասնագիտությունների եւ ծառայողների պաշտոնների անվանումների շնորհման կարգի վերլուծություն եւ անհրաժեշտության դեպքում միջոցներ կձեռնարկեն նշված բնագավառում ազգային նորմատիվ-իրավական բազայի կատարելագործման ուղղությամբ:

ՀՈԴՎԱԾ 8

Աշխատանքային գործունեությունը հաստատող փաստաթղթերում, բանվորների մասնագիտությունների եւ ծառայողների պաշտոնների անվանումների գրանցումը կատարվում է ՄՍՈՏ-ին, ՈՏ-ին եւ Միջպետական դասակարգչին համապատասխան, այն պետության լեզվով, որում մշտապես բնակվում է աշխատողը, այդ պետության լեզուների մասին օրենսդրության համաձայն:

Մշտական բնակության պետության տարածքից դուրս աշխատանքային գործունեություն իրականացնող անձի համար աշխատանքային ստաժը հաստատող փաստաթուղթ է հանդիսանում նրա աշխատանքային գործունեությունը հաստատող եւ մշտական բնակության պետության տարածքում գործող փաստաթղթից ռուսերեն արված նոտարական կարգով հաստատված քաղվածքը:

ՀՈԴՎԱԾ 9

Յուրաքանչյուր Կողմ ՄՍՈՏ-ը, ՈՏ-ը եւ Միջպետական դասակարգիչը կիրառում է իր պետության աշխատանքային օրենսդրությանը համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 10

Կողմերն իրենց պետությունների համապատասխան մարմիններին կհանձնարարեն տեղեկացնել Խորհրդատվական Խորհրդին սույն Համաձայնագրի իրագործման նպատակով
իրենց կողմից ձեռնարկված կոնկրետ միջոցների մասին:

ՀՈԴՎԱԾ 11

Կողմերի ընդհանուր համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ:

Փոփոխությունները եւ լրացումները ձեւակերպվում են առանձին արձանագրություններով, որոնք կհանդիսանան Համաձայնագրի անբաժանելի մասը եւ ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 13-րդ հոդվածով նախատեսված կարգով:

ՀՈԴՎԱԾ 12

Սույն Համաձայնագրի կիրառման կամ մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են շահագրգիռ Կողմերի միջեւ խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 13

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ստորագրման օրվանից, իսկ այն մասնակից պետությունների համար, որոնց օրենսդրությունը պահանջում է դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ ներպետական ընթացակարգերի կատարում՝ ավանդապահին համապատասխան փաստաթղթերի ներկայացման ամսաթվից:

ՀՈԴՎԱԾ 14

Սույն Համաձայնագիրը բաց է նրա նպատակներն ու սկզբունքները կիսող այլ պետությունների կողմից նրան միանալու համար, ավանդապահին այդպիսի միացման մասին փաստաթղթերի փոխանցման միջոցով:

ՀՈԴՎԱԾ 15

Սույն Համաձայնագիրը գործում է դրա ուժի մեջ մտնելու օրվանից 5 տարվա ընթացքում: Այդ ժամկետը լրանալուց հետո Համաձայնագիրն ինքնաբերաբար կերկարաձգվի յուրաքանչյուր անգամ մեկ տարով, եթե Կողմերն այլ որոշում չեն ընդունում:

ՀՈԴՎԱԾ 16

Կողմերից յուրաքանչյուրը կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից, այդ մասին գրավոր ծանուցագիր ուղարկելով ավանդապահին՝ դուրս գալուց առնվազն 6 ամիս առաջ:

Կատարված է Սարատով քաղաքում 1999 թվականի հունվարի 13-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր քարտուղարությունում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի նրա հաստատված պատճենը:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2000 թվականի ապրիլի 27-ից: